

ԳՐԱԽՈՍԱԿԱՆ—ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ

Ցուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի.
կազմեց Երուանդ Լալայեան. Հրատարակութիւն
Հայոց Ազգագրական Ընկերութեան. Պրակ ա-
ռաջին, 1915 թ. Թիֆլիս.

Մեր առջևն է պ. Լալայեանի ձեռնարկած հսկայ աշխատութեան
առաջին սլրակը: Իրեն յատուկ յոդնաջանութեամբ մէկիկ մէկիկ
նկարագրել է այս հազարից աւելի սիւնակների մէջ մեր նախկին
կուլտուրայի տարաբաղդ, ցիրուցան, բայց մեղ այնքան սիրելի
ու հարազատ մնացորդները: Երկու հազար ձեռագիրներ—պէտք է
հպարտանալ՝ ընդհանուրի չնչին մասը կազմող նոյնիսկ այդ թիւը
լսելիս, պէտք է երջանիկ լինել՝ դրանց ապահովագրումը ներկայ
ցուցակով տեսնելիս, բայց և պէտք է հիանալ՝ դրանց վրայ թափ-
ուած այնքան բարեխիղճ աշխատանքին մօտենալիս: Պ. Լալայեանի
բեղուն դրչի ու անսալառ եռանդի արդիւնք կարող է լինել միայն
այս գործը. և բնորոշ է, եթե ցուցակի յառաջարանում կարդում
ենք, թէ այդ ձեռագրերից շատերը 14 տարի շարունակ գաղտնա-
րաններում անձեռնամխելի մնալով բորբոսնել փչացել, թերթերն
իրար էին կպել, պ. Լալայեանը հանել է տուել, արևի տակ չո-
րացրել, մաքրել և այսպիսով ապատել կորուստից:

Ամբողջ ցուցակը հրատարակւելու է պրակ առ սլրակ և
պիտի բաղկանայ 1500 մեծադիր էջերից կամ 3000 սիւնակնե-
րից (առաջին սլրակը 1048 սիւնակ է): Առանձնապէս ուշագրաւ
է լինելու վերջին պրակը, կարդում ենք յառաջարանում, որ ամփո-
փելու է անտիպ ժամանակադրութիւններ, Աղթամարի Կաթողի-
կոսութեան, Կարնոյ ու այլ պատմութիւններ»: Այստեղ պիտ տըր-
ւեն և «մանրամասն տեղեկութիւններ ձեռագիրների հնութեան,
քանակի, որակի, գրիչների, ծաղկողների և կազմողների մասին,
ինչպէս և նիւթերի ու յատուկ անունների ցանկեր ու ծանօթու-
թիւններ, թէ ինչ գլխաւոր կենրդոններում են զտնւում այդ ձե-
ռագիրները և ինչպէս էին պահւում»:

Ներկայ պրակը, որ կրում է պ. Գրոց վելարերեալք» խո-
րագիրը, պարփակում է բացառապէս եկեղեցական գրքերի նկա-
րագրութիւնն ու սրանց յիշատակարանների և ծանօթութիւնների
ընդօրինակութիւնը. այսպէս՝ 4 Աստուածաշունչ, 24 Սաղմոսարան
(որոնց թւում և 5 Տօնացոյց, 2 Ժամագիրք, 1 Խորհրդատեր,
1 Նարեկի մաս) 4 Առակը և Երդ երգոց Սողոմոնի, 2 Հին կտա-
կարանի հատուածներ, 8 Մարդարէութիւններ—թղթեր և 438 Ա-

ւետարան։ Ժամանակագրական տեսակէտից դրանք հետևեալ պատկերն են ներկայացնում։ ԺԱ. դարում զրուած 2 աւետարան, ԺԴ դարում՝ 4, ԺԳ դարում՝ 27, ԺԴ դարում՝ 59, ԺԵ դարում՝ 122, ԺԶ դարում՝ 76, ԺԷ դարում՝ 125 և վերջապէս ԺԸ դարում՝ 13։ Ամենահին աւետարանը Կղաւտոյ Տալաշայ վանքում 1018 թուին զրուած մի երկաթագիր աւետարան է, որից մի երկսիւն էջ ցուցադրուած է Ներկայ պրակի մէջ, իսկ ամենից նորը 1750 թուի մի բոլորագիր աւետարան։

Խնչպէս ասուած է յառաջարանի մէջ, Վասպուրականի հայերէն ձեռագիրների ցուցակն ունի ոչ միայն մատենագրական, այլ և լեզուարանական, պատմական, հնագիտական ազգագրական ու գեղարուեստական մեծ նշանակութիւն։ Ընդունելով սակայն այս տրդարացի ընդհանուր աշխատութեան նկատմամբ (յատկապէս վերջին պրակի, որն ըստ Հնկերութեան Խորհրդի հաւաստիացումների խոստանում է լինել ամենից ուշագրաւն ու կարեորը) չենք կարող չնկատել, որ ներկայ պրակն իւր այդ հսկայ ծաւալի համեմատութեամբ պակաս պատմական հնագիտական, ազգագրական ու գեղարուեստական արժանիքներ ունիուր. պատմութեամբ հետաքրքրւողը ուշի-ուշով հետախուզելով բուրք յիշատակարանները մի քանի կցկտուր պատմական, տեղեկութիւններից զատ այլ բան չի գտնիլ այս պրակում. այսպէս՝ թ. 41 մի սիւնակ ոմն Հորստամ հանի (=խանի) վանը պաշարելու մասին, թ. 99. Ապաղայ խանի (XIII դար) ու Շահ Իսմայիլի (XVI դար) մասին թ. 120—21 Ղաղան խանի ու Հեթում թագաւորի մասին, թ. 353, Լէնկ-Թեմուրեան արշաւանքներից յետոյ Հայաստանի լքաւեր դրութեան, Սքանդարի ու Ահմադի կոխների մասին. թ. 369 թ. Շահուսիխ և Խոկանդարի կոխների մասին. թ. 258, 523, 611, Շահաբրասի արշաւանքների մասին. թ. 721—22, Օսմանցոց ու Պարսից պատերազմների մասին ելն։ Սակայն ոլէտք է դիտել, որ այս երեսյթն եղակի չէ. Յիշատակարանների այլ ժողովածուների ընթերցումը թոյլ է տալիս մեզ տսելու. դրանք ըստ մեծի մասին յիշեալ տեսակէտներից սակաւանիւթ են *), միապաղ, կաշկանդուած կրօնական մտածելակերպով։ Կրօնական շարժառիթն է այս ձեռագրերի մեծ մասի երեան գալու պատճառը, ուստի և նրանց յիշատակարանների մէջ Ս. Գրքի ապոլոգիան տեղ

*) Այդ կողմից հայերէն արժանագրութիւնների ժողովածուները անտիպոդալ հակառակութիւն են յիշատակարանների ժողովածուներին։ Խնձրան վերջիններս աղքատ են, միաւր, այնքան առաջինները հարուստ են պատմական, հնագիտական, հասարակական—տնտեսական, դրամագիտական եւն նիւթերով։ Մի ռՎիմական Տարեղիք (Կ. Կոստանեանի, Ս. Պ. Բ. 4945) կարող է ընտրիլազոյն ապացոյց ծառայել մեր ասածներին։

պիտի բռնէ։ Օր. Ներկայ պրակի մէջ, գրեթէ իւրաքանչիւր յիշատակագրութեան մէջ երբեմն մինչև սիւնեակների հասնող, յաճախ չափածոյ, ներբողեան է կարդացւում տուեալ կրօնական գրուածքին (=աւետարաններին), ջերմեոանգութեամբ ջատագովում նրա հրաշապործ զօրութիւը*) ու ընթերցողի օրհնութիւնն և ողորմին հայցւում գրիչի, բայց ամենից շատ ստացողի, սրա ընտանիքի անդամների ու աղղականների համար։ Յատուկ անունների մի կալեյդոսկոպ է ահա, որ պտտում է մեր առջեւ. ամեն տեսակ անունների՝ պարսկական, արաբական, տաճկական, քրդական բուն հայկականի հետ (գրական և գուառական) կարելի է հանդիպել այստեղ. այդ թւումները յաճախ էջեր են բռնում։ Սակայն այժմ մեզ տարօրինակ երեացող այս անւանացանկերը շատ հասկանալի են եղել ու անհրաժեշտ իր ժամանակին։ Միջնադարում որևէ լաւ ձեռագիր հանդէս բերելը խլած նիւթական էներգիայի ու ունեցած մտաւոր և բարոյական աղղեցութեան տեսակէտից կարող է համեմատել ներկայիս մի բարեգործական կամ կուլտուրական ձեռնարկի հետ։ ուստի և այդ «աստուածա—և մարդահաճոյ» գործի ի կատար ածովները—ստացողն ու գրիչը իրաւունք են համարում իրենց ու իւրայիններին ընթերցողի աղօթքներին ու ողորմիններին յանձնել։

Յիշատակարանների մասին խօսելիս չի կարելի կանգ չառնել մեր տասնեակ հաղարաւոր ձեռագրների իսկական վարպետի—հայ «գրիչի» բնութագրի վրայ։ «Անարժան, անիմաստ, անպիտան, անմիտ և անպտուղ ի բարեաց, ապակար, ախմար, վայ և եղուկ, մեղսաթաւալ, յոզնամեղ և տարտամ ոգու տէր, փծուն» ևլն այսպիսի ինքնաստորացուցիչ մակղիրների տակ թագնուում է իրօք համեստ հայ գրիչը, համեստ, բայց բեղուն, տոկուն, յոզնաշխատ ծայր աստիճանի։ «Ի դառն և ի դար ժամանակի, յորում տառապեցուցանեն և նեղեն զազդս քրիստոնէից աղգի աղգի կեղեքմամբ և անողորմհարկապահանջութեամբ և յաշխարհէ աշխարհ վտարմամբ իրը զգերի, տամբ և ընտանեօք. արդ ի յայսպիսում դառնութեան ժամանակի հայ գրի այդ աննկուն աշխատաւորը մինչև խոր ծերութիւն անդադրում արտադրում է գրուածքների մի այնպիսի խոշոր կոնտինուանտ, որ աւելի քան ապշեցուցիչ է։ Գոհացուցիչ

*) Այս կողմն առանձիապէս շեշտելու է։ Այն յարգանքը, որ վայելում էր աւետարանը ֆանատիկ միջնադարում որպէս հրաշապործ զօրութիւն, ցարդ եւս շարունակուում է մեր պիտական մասսայի մէջ։ Մինչեւ այսօր էլ նրան վաթաթում են 102, 120 թաշիրնակներով։ անձեռնամյունի սրբութիւն համարում, նրա ապարիսող օդիութեանը դիմումի հիւանդութեան դէպքերում եւ այլն։ Տիւպիկական է աւետարանի կուլտի պատմութեան համար ք. 558-ի յիշատակապրութիւնը։

օրինակ կարող է ծառայել հետևեալը. «Եւ արդ զրեալ եղեւ Յոհան(նու) գլուխն ձեռամբ վարպետին իմոյ՝ տէր Յովանիսի Մանգասարենց, քաջքարտողին. որ չ Բ տարի՝ ամառն և ձմեռն, գիշեր ու ցերեկ ի զրել եկաց: Որ զրեալ եղեւ ձեռամբ նորա ի (Յ)այսմաւուրք և տարենդիրք, ձառ և Սարգիս գիրք: Իսկ փոքր գիրք, տետր, հաղօթամատոյց, շարակնոց և սաղմոսարան, մաշտոց և գանձատետը ԾԿ (=ՅԿ), և այլ աւելի, և աւետարանս ԼԲ: Եւ զայս Յոհաննու գլուխս՝ ի ծերութեան ժամանակ, որ աչք չէր հայիլ և ձեռն կու դողար. բազում չարչարանօք՝ հաղիւ կարաց աւարտել և այլ չկարաց գրիչ բռնել, մինչի վաղճան, որ հանգեաւ ի Քրիստոս ԶԶ (86) ամաց» (թ. 619-20):

«Ձեռագրաց ցուցակը զարդարուած է լինելու ձեռագիրների մանրանկարների, և տառերի գունաւոր և միազոյն օրինակներով կազմերի և նկարներով—կարդում ենք յառաջարանում: Իրօք, այս պրակի մէջ կան մանրանկարներ ու տառեր, բայց բոլորն էլ միազոյն են. զբանց սիստեմատիկ դասաւորուած ու ծանօթութիւններով օժտուած երեան բերելը: Թւում է, աւելի նպատակայարմար կլինէր ու օգտակար:—Տպագրութիւնը կատարուած է խնամքով, լաւ թղթի վրայ և մաքուր, որ անշուշտ աւելի քան պատիւ է բերում հրատարակիչներին—Ազգագրական Ընկերութեան Խորհրդին:

Քանի դեռ ամբողջ գործը լիովին հանդէս չի ելել, դժուար է սպառիչ գնահատութիւն տալ: Գլխաւոր արժանիքներն արդէն մատնանշեցինք, իհարկէ առանց համեմատելու սոյն ցուցակը հ. Յակ. վ. Տաշեանի «Յուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեան ի Վիհննա», -ի կամ Ֆր. Կորն. Կոնիքերի «Բրիտանական մուզեյի հայ ձեռագրերի ցուցակ»-ի ալէս ընտրելազոյն աշխատութիւնների հետ սրանք կլասիկ գործեր են, որոնց նմանուելը ամեն մի նոր «Հայ ձեռագիրների ցուցակ»-ի համար իձեք պիտ լինի:*)

1915 թ. 45-ին Յունիոն:

Վաղ. Տեր. Յակովիեան:

*) Եղանակ խօսելով ցուցակների մասին, չի կարելի ցաւ ի սիրո չնկատել, որ Յ. Էջմիածնի Մայր Աթոռի Մատենադարանն իւր հազարաւ որ ձեռագիրների հաջողէպ, զանէ, փոքր ի շատէ բաւարար ցուցակ չունի: Տաշեակ տարիներ են, կարդում ու բուժմ ենք ամենաքեր, ինչ սկսուած է: այդ ցանկավի ցուցակագրումը, մինչեւ օրս դժբախտարար առանց աւարտ ստանալու ու հրապարակ դալու: Հայ գրականութեան, պատմութեան ու լեզուի համար մի աղաղակող անհրաժեշտութիւն ու կարիք է այզօրինակ ցուցակը: յուսանք զոնէ այս տանիամեակում այդ կարիքը իւր սրատեան բաւարարութիւնը զոնի: